62. ԽԱՐԻԲՆ ՈՒ ԴԱՐՎԵՇ

Քաղքի մը մեջ աղէ մը կեր ու ուրեն լէ շատ խորոտիկ կնիկըմ, անուն լէ Նարգեզ էր։

Էդ աղին մշակըմ լէ կեր, անուն Խարիր էր։ Աշըղ էղեր էր վըր աղի կնկան։ Սահաթըմ օր չտեսներ, դիներ աշխարհս վրեն մութն էր, բըլէ կնկա սիրտ չկեր ղԽարիր։

Էդ քաղքի մեջ դարվեշըմ էկեր էր, թուղթ կիշքեր, ֆալ կբանար։

Ավուրըմ մեկ, Խարիբն ասեց.— Ես պիտի հ'ելնիմ էրթամ էդա դարվեշի խեչ, իտամ թուղթըմ էնե ընծիկ, սիրվըցու զիմ խաթուն ու զիս վիրարու։

Հ'ելավ զարկեց էկավ դարվեշի մոտ, տեսավ օր դարվեշն ու ուր կնիկ մինակ ին, դարվեշ թալեր է կտորըմ խըսիլ ուր տակ ու նստեր է։

Ասեց.— Դարվեշ, դարվեշ, խուրբան էղնիմ քզիկ, բանըմ կասիմ քզիկ, մարդու չասիս։

Ասեց.—Հ'որի՞ պիտի ասիմ, ես դարվեշ իմ, իսկի հըմալ բան կէղնի՞։

Ասեց.— Դարվեշ բաբա, իմ սիրտ հ'ընկեր է իմ խաթուն, էդա էրկու տարի կիրիմ ու կվառիմ, ձեռք չիտա ընծիկ, ես լէ կվախենամ, չըմ հ'իշխընա խոսք բանա ուրեն, վախենամ իտա զիս .սպանել. թուղթըմ էնիս, զիս ու զիմ խաթուն սիրվըցուս վիրարու, ինչ որ հ'ուզիս՝ կիտամ։

Դարվեշն կասե.—Թրղ էղնի. զքու անուն, զքու խաթունին ասե տեսնամ ի՞նչ է, հ'եբի թող գնա, էկո լուսուն, առ զքու թուղթ ու գնա։

Ասի.—Իմ անուն Խարիբ է։ Իմ պապուն ֆլանքյաս։ Խաթունին Նարղեզ, խաթունի պապուն ֆլան, թորկի էկա։

Օր թորկի էկա, ինքն ուրենս ասի՝ «Կանի հ՝ելնիմ էդա դարվեշի հ՝երդրկին, տեսնամ ի՞նչ կենե»։

Գողտուտիկըմ հանի զոտքի ամաններս, օր ձեն չելնի, հ՝ելա. հ՝ելա դարվեշի հ՝երդրկին, զչիմ ծըրպեցի, տեսնամ, օր դարվեշ ուր քաշկուրի մեջեն հանեց դիրքըմ, քիչըմ պըթպըթաց, սուֆրե մը բացվավ, մեկ հավու կաթ մենակ պակաս էր ուր մեջ։

Հաց կերան խըլըսան, պըթպըթաց, խահվեն էկավ հ՝առեշ ուրանց։

Խահվեն խմեցին խըլըսան, ըստհազ յորղան-դոշակ էկավ, հ՝ելան պառկան քնան։

Զէդ օր տեսա, թորկի էկա մըր տուն։

Լուսմութ հ՝ելա գացի, ասի.—Դարվեշ, իմ թուղթն հ՝ու՞ր է։

Ասեց.— Հանդ է հ՝ոդա։

Տվեց զիմ թուղթ, առա էկա։ Առա զիմ թուղթն, էկա տուն։

Տունն հասա, չհասա, հեղըմ լե տեսնամ՝ իմ խաթուն ճամբեց զուր մշակ իմ հ՝ետևեն, առավ ու գնաց։

Հ՝ելա գացի, զարկի զդուռ, մտա ներս։

Ներս օր մտա, մեկ լե տեսնամ իմ խաթուն վերցուց ընծիկ ասեց.

— Հ՝ու՞ր իս, էդա էրկու օր չըս էրևա, դու չըս գինա, օր սահաթըմ իմ աչքիս հ՝առնևեն հեռենաս, գինամ աշխարհս ավեր է վըր ընծիկ։

Բռնեց իմ թևեն, նստցուց ու էկավ փաթվավ վիզս, ասեց.—Էդա տեխեն դուրս չըս հ՝ելնի։

Գիշեր ու ցերեկ բռնեցի զէն տեխ, կանա, գիշեր լե հոն կպառկենք, ցերեկ լե։

Տեսա օր էդ հըմլա չէղնի, օրըմ զիմ գլուխ պիտի իտամ դուրս, ասի.— Պիտի հ՝ելնիմ էրթամ դարվեշ բարի խեչ։ Ասիմ՝ ընծիկ թուղթըմ էրե, էդա կնկա սիրտ պաղի հ՝իսնե։

Հ՝ելա դեմ քշեցի, էկա դարվեշի խեչ, զարկի զդուռ, մտա ներս։

Դարվեշ օր զիս տեսավ ասեց.—Խարիբ, խեր է։

Ասի.— Խեր է։ Էկեր իմ թուղթըմ էնիս, էդա կնկա սիրտ պաղըցուս հ՝իսնե, ես կվախենամ, հ՝ըմնօր էդա հըմլա էրթամ-հ՝իգամ, օրըմ հ՝իգա իմ աղեն քիսի վըր մզիկ, զգլուխս զարկե։

Ասեց.—Թըղ էղնի. զնա, կէնիմ. քզիկ թուղթըմ, էկո առ ու գնա։

Հ՝ելա թորկի, էկա։ Լուսուն հ՝ելա գացի, առա զիմ թուղթն ու էկա։

Օրըմ մանցի, ասի.—Տեսնամ, էդ կնիկ զիս կճամբե՞ կանչե։

Չճամբեց կանչեց։ Հ՝ելա ես իմ օտքով գացի։ Գացի, մտա ներս, աչք օր առավ հ՝իս, ասեց.— Հեղըմ լե իմ հ՝երես չելնիս. օր հ՝ելար՝ զքու գլուխ կղաբկիմ, կէրթաս զքու տուն կառնիս, էդա քաղքեն կհեռենաս, կէրթաս ուրիշ քաղաքըմ։

Հ՝ելա, թորկեցի, էկա դարվեշի խեչ, զիս թալի վրը օտաց։

Ասի.— Դարվեշ բարա, քու բաղդն ու քու կնկան իմ հ՝ընկի, ճարըմ իրե, էդա մարդ կիտա զիս սպանել, թուղթըմ էրե, նը շատ սիրինք զիրար, նը շատ ատինք։

Ասեց.—Նստի էդա տեխ, զիմ դլխու գալածն թարիֆ էնիմ քշիկ, սորա էնիմ զքու թուղթն, հ՝ելի, զնա։

Ասեց.— Խարիբ ախբեր, ես ֆլան քաղաք կմնեք. քիչըմ օր փորկա, էկա հ՝առեջ, իմ մամ զիս առավ, տարավ, դրեց դարվեշի մը խեչ, օր թուղթ իշքել սովրենք։ Ինչ գլուխ ցավանք էնիմ, ութ աարի աշկերտուութեն էրի էդ մարդու հ՝առեջ, մինակ տարեա իշքելըմ սորվեցուց ընծիկ, հ՝ելա թորկի էկա։ «Տարիեն» գինա՞ս իմալ կիշքին, մասալա ասիմ, կէրթան դուրան դաշտի մը մեջ, հըմալ, օր ճիտու ձեն չլսվի, բոլոր ուրանց կլոր խազըմ կքաշին ու կնստին մեջ ու կկարդան, կծխին տրսնուչորս չեշիտ դեզրոնք, յոթ ըռանգ մոմ կվառին, անոթի ու ծառավ կնստին ու կկարդան։ Մարդու հ՝առջև չեշիտ-չեշիտ բաներ կիգան կընցնին, բըլե մարդ պետք չէ վախենա, մարդու բան չըն էնի, կբերին մարդու գլխուն շաղցի քար կկախին, զմարդ կտանին, մազե կարմընջից կընցուն, կբերին չախու զմարդու աչք կհանին, օր մարդըմ դիմացավ, հ՝ըմնուց վերջ կիգա փարիներու մեծ, կնստե վրը աթոռքին, կասե. «Հուզե՝ իտամ»։ Մարդ պետք չէ օսկի ու արծաթ հ՝ուզե, յա մատնքի քար, յախուտ մըհոր հ՝ուզելու է, նեղ վախտ կշըփե, էրկու արաբ կկանին հ՝առեջ, ինչ օր հ՝ուզե՝ կիտան։ Հ՝ելա, գացի դուրան դաշտի մը մեջ, խազեցի կըլոր զաղըմ ու նստա, զիմ մոմեր վառեցի, զիմ դեղորեք ծխեցի, մեկել տեսնամ, բերին չախցի մը քար, կախին վրը գլխուս, ասին. «Կելնիս հ՝եռենաս, թը չէ հըմկա կթորկինք, կիգա վրը քզի»։

Անկամ չէրի։ Ըստհազ տարան մազե կարմնջից կընցուցեն, ասին՝ կընդնիս, յամ չէ՝ կզարկինք իտանք գետի մեջ, հոնկուց լե չվախեցա։ Բերին խանջալ, զաչքերս հանեն, մըհալ չէրի։

Մեկ՝լե տեսնամ՝ մեկըմ՝ հագուկ-խրփուկ, էկավ, նստավ վրը աթոռքին։

Ասեց. «Հ՝ուզե իտամ»։ Ասի. «Ես զքու մըհոր կուզիմ»։

Ասեց. «Ջանըմ, դու զմըհոր ի՞նչ կէնիս, օսկի-արծաթ հ՝ուզե, իտամ»։

Ասի. «Ես ի՞նչ կէնիմ զօսկին ու զարծաթ, զքու անգին քար կուզիմ»։ Ասեց. «Քու սորվըցնողի վիզ կոտրի»։ Հանեց տվեց, առա էկա։ Առա էկա, շփեցի, տեսա օր ցերեկվան պես լուս կիտեր։

Ասի. «Վալայի, ես գինամ, զէդա քար առնիմ, էրթամ տուն, իմ կնիկ տեսնա, կբռնե իմ ձեռքեն կառնե»։ Ասի. «Կանի, կգնիմ էդա տեխ, կպա-

հիմ»։ Վերցի, գրի պատի ծակ ու թողի գացի, լուսուն հ՝ելա էկա, իմալ օր գրեր իս, հըմալ էկո գտի, քար չկեր, գիշեր լուս տվեր էր, էկած են տարած. փոշիմնա, զարկի զլխուս ու չոքերուս, չի ֆայդա ձեռքես գացեր էր։ Հ՝ելա թորկի էկա, ասի. «Կէրթամ իմ դարվեշի խեչ, զէդ սանյաթն աղեկ սորվիմ»։ Առա զիմ կնիկ ու էկա իմ դարվեշի խեչ, մեկ լե էղա մշակ։ Կիշիմ օր դարվեշ հ՝ըմնօր կհանե զուր գիրք, կկարդա ու կդնե ուր չանթի մեջ, ընծի չիտա կարդամ. իմ սիրտ կէրի ու կվառի, ձեռքս չարա չկա։

Հ՝ելանք. առանք զիրար, ես իմ դարվեշն ու իմ կնիկ, գացինք ուրիշ հ՝երկիրըմ։ Գացինք ֆըռունի մը հ՝առջևեն կընցնենք, մըր հետ հաց չկեր, հացեր լե թաժա լըցած են ֆըռունի մեջ։ Մեկ լե տեսնամ իմ դարվեշ հ՝ելավ մտավ ֆըռունի մեջ, իմալ օր մարդ պաղ ջրի մեջ օլըրտեր։ Ֆըռունճին բռռաց, կանչեց. «Աստծու սիրու խաթրի համար էղնի, հըմկա կվառիս, կէղնիս փոշի, էկո, ես կհանիմ, իտամ քզի համ». դարվեշ իսկի մըհալ չէրեց, ժողվեց զհացեր, զարկեց հ՝անթե տակն ու էկավ հ՝ընկավ հ՝առջև մի, էկանք։ Էկանք դուրան դաշտի մը մեջ, մութ տվեց վրե մի, մեկ լե տեսնամ, դարվեշն ծոցեն հանեց զուր փըռըթուկ, քիչըմ պըթ-պըթաց, չադրըրմ զարկին մզիկ, օր թագավորին լե հըմալ չադրը չկեր։ Խալիք մեկ թարաֆ փըռուկ են, յորղան դոշակ՝ մեկ թարաֆ. կերանք, խմեցինք, պառկանք, քնանք, հ՝ելանք լուսուն, կէրթենք։ Հ՝ելա տեսա, օր դարվեշ քնուկ էր, փնտռեցի զդարվեշի չանթեն դտա, հանի զգիրք միջեն ու փախա։ Ինչ խըդար գացի, դարձա հ՝ետևս իշքեցի, տեսա օր դարվեշ չկա, ասի՝ վախե հ՝ելա, նստիմ էդա տեխ, հանիմ զիմ գիրք կարդամ։ Նստա հովածե մը տակ, հանեցի զիմ գիրք, առա ձեռքս, մեկ լե տեսնամ, օր գետին պատռավ, դավրեշս բռռաց ու իմ կնկա հետ կանավ հ՝առեշս։

«Բեբաղտ,— ասեց,— իմ ձեռքեն հ՝ու՝ր կփախնիս»։

Զիս թալի դարվեշի օտաց վըրեն։

«Քու բաղտն իմ հ՝ընկի, ես էրեր իմ, դու մ՝էնի»։ Ասեց. «Էդա հեղ լե խաթըր քզի, հեղըմ լե հըմալ խալթ չէնիս»։ Առավ զիս ու զիմ կնիկ, հ՝ընկավ ճամբախ, էկանք. էկանք, մութ տվեց վրե մի, դուրան տեխ մըն էր, դարվեշ հանեց ծոցեն զուր գիրք, կարդաց. չադրըրմ բացվավ հ՝առեշ՝ զմեկ թարաֆ խութնի յորղան-դոշակ պարզուկ էր, մեկ թարաֆ՝ խալի ու խալիչա, չայ մեկ թարաֆ կեռար, խահվեն մեկ թարաֆ, թուռլու թուռլու եմակներ վըր սուֆրեն։ Կերանք, խմեցինք, հ՝ելանք պառկանք, քնանք. հ՝ելանք լուսուն, մեկ լե սիրտս ավըրվավ։ Ասի. «Վալայի, հազար զլխեն էղնի, պիտի զդարվեշի գիրք գողնամ»։ Հ՝ելա էլ սաղ գիրք չգողցա, տաստըսնուհինգ թուղթ կտրի, ասի. «Բալքիմ դարվեշ չկռայե»։

Դարվեշ հիմցավ, հ՝ելավ քնուց։ Ասեց. «Տղա, չէ քզիկ ասի, հեղըմ լե բեբաղաութին չէնիս. հ՝ո՞րի զիմ դրքի թղթեր կտրեր իս, հ՝իսնե չվախեցա՞ր, չասի՞ր էդ մարդ կկռահե»։ Զիս թալի վըր օտաց։

Ասեց. «Քու գլուխ ուտե, մարդ ծակ աչք է, ինչ խտար հտաս, կուղեառ ղէդ տաս տըսնուհինգ թուղթն ու իմ աչքի հ՝առջևեն կորի գնա, քանի բթամամ գիրք չըս գողցերի»։

Մեկ լե տեսնամ իմ դարվեշ համբարձավ, առա զիմ թղթերն ու զիմ կնիկ, էկա էդա քաղքի մեշ, վարձի զէդա տեխ ու մանցի։ Հըմկա քումն է, լաո, թուղթըմ կէնիմ քզիկ, օր նը շատ սիրեք զիրար, դու ու քու խաթուն, նը շատ ատեք, բըլե շատ չքաշե, վախենամ փոշմնեք, էլ ես ձըր ձեռք չըմ հ՝ընկնի, մարդ օլան ծակ աչք է, բանով չկշտանա։

Էրեց թուղթըմ տվեց ընծի։ Ասեց. «Առ ու գնա, էլ քզի բան չասե, նը շատ զիրար կուզիք, նը շատ զիրար կատիք»։

Տվեց զիմ թուղթն ու համբարձավ, մեկ լե տեսնամ, դառնամ հետև՝ դարվեշ չկա։

Առա զիմ թուղթն ու էկա տուն, մանցի վախտըմ, իմ խաթուն ճամբեց, զիս առավ, գնաց։

Ասեց.— Խարիր, էկո զողորդն ասե, ի՞նչ էր էրի օր հ՝առջին հեղ ես զքզի էդա խդար կուզենք, սորա հըմալ հ՝ելար իմ աչքեն, օր կասենք մորթիմ ղէդի՝ զարուն խմիմ։

Էդտեխ իմալ օր գլխեն պատմեցի ձզի, հըմալ պատմեցի զիմ գլխու գալածն իմ խաթունին*։

Ասեց.—Հըմլա վըր հ՝ըմնուն աղեկ է, էն մարդու ասածն օղորդ է, մարդ բանով չկշտանա, նը զիրար շատ սիրենք, նը զիրար շատ ատենք։

Աստծուց հ՝իշավ իրեք խնձոր, մեկ ասողին, մեկ լսողին, մեկ լե՝ անկաճ էնողին։

---

* Հոս հեքիաթ ասողն անգամ ալ կրկնեց իր ասածները, բայց երկարության համար չուզեցի գրել (Ս. Բ.)։